



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԻՄԱՍՏՈՒՆ ՀԱՅՐՈՊԵՏԸ

Նորին Ս. Օծուրյուն Տ. Տ. Գեղրգ. Զ. Կարողիկոսի մահը ամենածանր կորուստն է Հայաստանյայց Առաքելական եկեղեցու, հայ հավատացյալ ժողովրդի, ոչ քիչառութեական աշխարհի և խաղաղասեր, բարի կամքի տեր հազարավոր մարդկանց համար:

Մեծ է Հայաստանյայց Առաքելական եկեղեցու վիշտը, որովհետև խորը և անդարմանելի է կորուստը:

Հանգույցյալ Վեհափառը հայ ազգային-եկեղեցական պատմուրյան վերջին հիմնամյակի ամենակարևորուն, յաստակավոր ու հեղինակավոր հոգևորականներից մեկն էր: Նրա կյանքն ու զրծունեուրյունը, իրեւ ներհուն զիտճական, հոգիշունշ ընթարասաց, հայրենասեր եկեղեցական, անձնողիր Հովկապետ, սերտորեն կապված են եղել հայ ժողովրդի պատմուրյան վերջին շրջանում տեղի ունեցած պատմական դիպերի հետ:

Հանգույցյալ Վեհափառն իր ողջ գիտակցական կյանքը, առանց մնացորդի, սկսած Ս. էջմիածնի Գեղրգյան ձեմարանի աշակերտական գրասենյաններից մինչև Ս. Լուսավորչի պատմական Արոռը, նվիրել է հայ ժողովրդին և Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն:

Շատ համեստ է նրա ծագումը՝ փականացրծ արենստավորի զավակ: Նրա տեղ մի որեւէ ուրիշ մանուկ, հավանաբար, հետևեր նոր արենստան և դառնար փականազործ, բայց նա՝ Գեղրգը, ուներ այլ ցանկուրյան, ուներ այլ երազ: Նրա ցանկուրյունն էր սովորել, բարձ կրուրյուն ստանալ, որպեսզի կարողանար լավագույնս իրականացնել իր

մյուս երազը, այն է՝ ծառայել հարազատ Ազգին, Հայրենիքին ու եկեղեցուն: Ուստի և ևս պահանջեն սովորեց սկսյալ ծննդավայրի՝ Նոր-Նախիջևանի ծխական դպրոցից, հոգևոր սեմինարիայից, Ս. էջմիածնի Գեղրգյան ձեմարանից, մինչև Լայրցիզի (Դեմիանիա) համալսարանի փիլիսոփայական և աստվածաբանական բաժինը, մինչև սույն հաղաքի հանրածանոր երածշտական կոնսերվատորիան:

Համալսարանավարտ Գեղրգ սարկավագի համար այս բացվել էր իր երազի իրականացման՝ Ազգին, Հայրենիքին և եկեղեցուն լրիվ ծառայելու նախապարհը: Եվ ահա, մենք երան անսենում ենք և՛ Մայր Արռոռում, և՛ Նոր-Նախիջևանում՝ նվիրված հայ նոր սերնդի դաստիարակուրյան կենսական գործին: Նա այդ աշխատանքը կատարում է նիշտ այնպես, ինչպես կատարել էր Ե. դարի պանծականի Մեսրոպյան հույլը՝ Թյուզանդիոնից, Արքենից և Աղեմսանդրիայից Հայաստան վերադառնալուց հետո՝ ազգային-եկեղեցական կյանքում ստեղծելով նոր շարժում: Նա սիրում է իր ժողովրդին և ժողովուրդը՝ երան: Նա սիրում է իր աշակերտներին և աշակերտները՝ երան: Նա սիրում է իր հարազատ Ակեղեցին ու եկեղեցու նվիրապետուրյունը՝ երան: Եվ այս փախադան սերը նպաստում է նրա բարձրացման՝ հոգևորականուրյան ասպարեզի մեջ, որի ընտրել էր նա որպես միջոց Ազգին, Հայրենիքին և եկեղեցուն ծառայելու համար:

Մարկարագ-ուսուցիչը ծենադրվում է վարպակու և նշանակվում փոխ-առաջնորդ Նոր-Նախիջևանի քեմի հայուրյան՝ կարծես փոր-

ձելու համար նրա ղեկավարելու ընդունակությունը: Չէ՞ որ «մարզաքանի ի պատվի չէ իր բաղադրություն»: Բայց Գեռց Վարդապետը իմաստուն և շրջահայաց «մարզաքան» է. նա ամենից ավելի տեղյակ է իր հայրենակիցների հոգեբանության և թեմի ազգային-եկեղեցական-մշակութային գործերը կազմակերպում և ղեկավարում է այնպիսի փորձառությամբ և գիտակցությամբ, որ ամեն որ հարգություն է և սիրություն երիտասարդ առաջնորդին:

Եկեղեցին էին փորձության ահավոր տարիները. սահմանագերծվել էր Համաշխարհային առաջին պատերազմը: Մշշավանչային այդ օրերին, ահա, նորից տեսնում ենք մենք Գորդշյան Գեռց Վարդապետին, որպես «Ծրայրական օգնության կոմիտե»ի հայագան և Մինորի անդամ, ավելի ուշ՝ որպես եպիսկոպոս, վաճական կառավարության նախագահ և Մայր Տաճարի լուսարարաբետ, հետո՝ որպես թեմակալ առաջնորդ Թքիլսիի և անդամ Գերագոյն Հոգեռորդ Խորենի, միշտ իրեն սիրելի ժողովրդի և Հայաստանյաց եկեղեցու գործոն ծառայության մեջ: Այդ շրջանի օգտաշատ գործունեությունների շարքին հիշատակելի պիտի մեան «Ազատ եկեղեցական» ներից և նրանց վերամիացումը Մայր Արքունին, ինչպես նաև հայ հավատացյալ համայնքների պառակտից շարժման սահմանարարություն ու կասեցումը, Թքիլսիի հայ եկեղեցիների մաֆրագործություն «Ազատ եկեղեցական» ներից և նրանց վերամիացումը Մայր Արքունին, ինչպես նաև հայ հավատացյալ համայնքների ժողովունեցումը Գորեքշյանին:

Եվ շատ շանցած, եկեղեցանվեր ու ժողովրդականվեր ծառայություններով բարորդից սիրված ու հարգված Գորեքշյան սրբազնը, Խորեն կարողիկոսի կողմից նշանակվում է Ամենայն Հայոց Հայրապետական տեղակալ — մի կարևոր ու պատասխանառու պաշտոն, որը վարում է նա կաթողիկոսի մահից հետո ևս, յուրահատուկ ձեռնիմասությամբ և անսասան կորովով: Այդ պաշտոնի մեջ առավել ևս հզորացած ազգային-եկեղեցական ժողովուն որոշմամբ, որով դառնում էր Ամենայն Հայոց Հայրապետական տեղակալ — մի կարևոր ու պատասխանառու պաշտոն, որը վարում է նա կաթողիկոսի մահից հետո ևս, յուրահատուկ ձեռնիմասությամբ և անսասան կորովով: Այդ պաշտոնի մեջ առավել ևս հզորացած ազգային-եկեղեցական ժողովուն որոշմամբ, որով դառնում էր Ամենայն Հայոց Հայրապետական տեղակալ, նա կարողացավ և՛ Մայր Երկրի, և՛ Սփյուռի հայության սիրությունի առարկան դարձնել Ս. Էջմիածինը և Ամենայն Հայոց Հայրապետական լուսավորչահաստատ Մայր Արքունը:

Նորից եկան փորձության ահավոր տարիները, սահմանագերծվեց Համաշխարհային

երկրորդ պատերազմը: Կենաց ու մահու, լինելու և շինելու օրեր էին՝ իշտ շարու զորավար ազգերի՝ «փոքր ածու» հայ ժողովրդի համար ևս: Եվ ահա, Հայաստանյաց եկեղեցին, որ ատելով ատում է պատերազմը, որ զարեւով վայշարել է անարդարության գիմ և միշտ աղորել աշխարհի խաղաղության և մարդկանց հանուրյան համար, Ամենայն Հայոց Հայրապետության Տեղակալի զիսալորուրյամբ, յուրվասանն դիրք գրավեց հարազատ Հայաստանի պետության հետ Սովետական Միուրյան եղբայրական ժողովուրդների կողմին, իր ուժը ի սպաս դնելու համար շարի խափանման գործին: Այդ դուզնայիշյա, բայց խորեղաճաշական ուժի գեղեցիկ արտահայտությունն եղավ «Մատուցի Դավիթ» հրասալյային շարապայունը, որ հաղորդապանձ Կարմիր Բանակի շարժերում մտավ Թեղլին:

Հայրենական պատերազմի փառավոր հաղթականի արշավույսը ողողել էր արդեն ամբարձ աշխարհը, երբ պատմական Վեհարանում 1945 թվականի հունիսի 16-ին զումարված ազգային-եկեղեցական պատկառելի ժողովը, որին մասնակցում էին համայն աշխարհի հայության աշխարհական և նորմարական լիազոր ներկայացնուցիչները, Ամենայն Հայոց Մայրագոյն Պատրիարք և Կարողիկոս ընտարեց մինչև այդ Ազգին, Հայրենիքին և եկեղեցուն արժանավորապես ծառայած Հայրապետական Տեղակալ Գեռց արքեպիսկոպոս Գորեքշյանին:

Հանգուցյալ Վեհափառի գանակալությունը կուսավորչի պատմական Արքունի վրա, մեր օրերի բարձր ու գժվարին պայմաններում, նաև և խոստումնայից մի էջ բացեց հայ նորագոյն ազգային-եկեղեցական պատմության մեջ: Եվ երբեք պատահականություն չէր այն բարձր ու խորը վստահությունն ու համականենքը, որպէս ազգային-եկեղեցական ժողովը միաձայնությամբ նրան ընտարեց Կարողիկոս:

Ո՞չ ո՞ք բացի նրանից պիտի կարողանար այնքան բարձր պամել Հայաստանյաց Առաքելական եկեղեցուն հետինակությունը, Մայր Արքունի համայնքը, Ս. Էջմիածնի պատմական նշանակությունը, ազգային-եկեղեցական միաձայնությունը և Հայ եկեղեցու կարգն ու կանոնը:

Բախտավորություն էր նրա գանակալությունը կուսավորչի Արքունի վրա՝ Հայաստանյաց Առաքելական եկեղեցու, հայ հոգևորականի դասական, խոր հավատով, ճափառեց ո՞չ միայն ողջ հայության սերն ու որդիական սակածանքը,

Հանգուցյալ Վեհափառը, իր բարյական ու հոգևոր հազվագյուտ շնորհներով, անկաշառ հայրենակարությամբ, ժողովրդականիւր զործունեցությամբ, հայ հոգևորականի դասական, խոր հավատով, ճափառեց ո՞չ միայն ողջ հայության սերն ու որդիական սակածանքը,

այլ նաև հայրենի հարազատ պետուրյան համակրանքն ու աշակցուրյունը, քրիստոնյա բույր եկեղեցիների, հատկապես արևելյան օրորդու եկեղեցիների, այդ բվում Ռուսական Ուղղափառ Եկեղեցու և ուստի հոգեութեանուրյան և ժողովրդի բարեկամուրյունն ու սերը:

Փականազործի համեստ տեսակից մինչև Սմենայն Հայոց Հայրապետուրյան Դահը և սարկավագուրյունից մինչև եկեղեցական հվիրապետուրյան գերագույն աստիճանը՝ կարողիկոսուրյունը, նա բարձրացավ շնորհիլ այն անսովուտ արժանիների և ձիրեների, որոնց ակնալբյուրը նա գտնում էր իայ ժողովրդի հոգու խորքում, ժողովուրդ, որ ենու է, սամշելագործ է, որ իր ավերակեների մոխիրեներից կար ժամանակամիջոցում անեցրեց նոր ծիլեր և հասակ գիտական, տեսնեսական ու մշակուրային անհայրերաց վերելիք:

Նա մոտիկից էր հանաշել Մակար, Խրիստան, Խզմիրյան, Գեորգ Ե. և Խորեն կարողիկոսներին, գործել ու գործակցել էր նրանց հետ, մեծացել ու փորձառուրյուն ստացել նրանց շնչով և յուրաքանչյուրից յուրացրել այն, ինչ բարի էր, գեղեցիկ, առինքնող: Այս իրողուրյան մեջ պետք է փնտրել երշանկահիշատակ Գեորգ Զ. Հայրապետի անսահման ժողովրդականուրյան զաղտնիքը: Նա խկալան խնամածու, անաշառ, անկաշառ, գորգուս ու բարեխնամ Հայր եղավ բոլորի համար: Հակառակորդը, ինչպես և բարեկամը, աղորդ և օրհնուրյուն միայն լսեցին նրա օրինյալ բերանից: Նա ներեց մեղանշողներին, հաշուրյուն և համերաշխուրյուն բարողքեց և լուսավոր հանապարհը ցույց տվեց բոլոր երանց, ովքեր հանուն փցուն փառի, արոռի և մամնեայի, կորել ին ատելուրյան և պառակտման անել բավիղներում: Իր հայրապետական կոնդակները, որպես բյուրեղակերու մաքրամաքուր հայելի, ցոլացնում են ամենազեղեցիկ զգացմունքներով լի նրա գոհար սիրաբ, ուր երեք տեղ չեն գտել կեղծիքն ու շարիքը:

Նա անշափ էր սիրում Հայաստանյաց Եկեղեցին: «Ես պարծենում եմ, որ Հայ Եկեղեցու զալակ եմ», — ասում էր նա: Համամիտ լինելով հանդերձ բոլոր մյուս Եկեղեցիների և կրոնների հետ բարոյական զալափարեների շուրջ համագործակցուրյան, նա այսպես էր խրատում.

«Հայ մա՛րդ, հավատարիմ մնա՛ ք երանեի հախնեաց ավանդներին և բարձր ու անվար պահպանի՛ր ազգանվեր Եկեղեցուդ վեհրավուրյունն ու գերիշխանուրյունը, արտաքին քերերին ամեն ուսնձգուրյունից»:

Նրա սերը Մայր Հայրենիքի հանդեպ՝ հասնում էր պաշտամի: Եվ ցանկանում, խրատում, սովորեցնում էր, որ յուրաքանչյուր հայ, ինչ կրոն էլ դավանի, ինչ կուսակցուրյան էլ պատկանի, ինչ երկին ներք էլ ապրի, գիտակ լիներ այն նշմարտուրյան, թի՛ «Հայը բացի Սովորական Հայաստանից, չունի այլ Հայրենիք: Հայը, Հայաստանից լուրս, չունի այլ հաստատուն կովան, բայց երեւ Մայր Հայրենիքը, Հայ Եկեղեցին և նրան զիավորող Ամենայն Հայոց Հայրապետուրյունը, Ս. Էջմիածնի Հայրապետական Արքոոռվ»:

Նա ուրախացավ իր վարանդի հոտի մեկ խոշոր զանգվածի հայրենապարձով: Զանգվածային հայրենապարձուրյունը, որի լրիվ իրականացման մեջ նա տեսնում էր Հայրենիքի բարզավանման և հայ ժողովրդի երշանկուրյան նպաստող գործուներ, եղավ և գենու է երանաշնորհ Հայրապետի կուտակը:

Նա երեք շղապարեց պայքարելուց հանուն համաշխարհային խաղաղուրյան: «Մենք այսօր իրավունք չունենք լոելու, — հայտարարում էր նա, — այլ պարտավոր ենք հանդիս զարու և ուժգնապես բողոքելու պատերազմի դեմ, որը հակասում է համարյա ամբողջ մարդկուրյան դավանած կրների սիրու և նդրայրուրյան զաղափարին, մարդկուրյան դավանած բարոյական սկրզբունքներին և շահներին...»:

1950 բվականին, Մոսկվայում գումարված Խաղաղուրյան կողմենակիցների Համամիուրենական համաժողովում, նա անձամբ հայտնեց իր ցասումը պատերազմը իրահողների դեմ: «Մարդկային միտքը, — ասաց նա ուժեղ ձայնովը, — որ ձգում է հայտնաքերել տիեզերքի մեջ զոյուրյուն ունեցող ուժերը, բասարել տիեզերական կյանքի օրենքները և նշմարտուրյուններ հայտնաքերել, ինչո՞ւ համար, երեւ ո՞չ միայն նորահամար, որ այդ բալորը ծառայեն մարդու կյանքը կատարելազորելու և նորան երջանիկ դարձնելու: Եվ ուրեմն պատերազմի հրաձիգները ի՞նչ բարոյական իրավունք ունեն մարդու, այդ բարձրազույն էակի կյանքի հետ խաղաղու...»:

Ողբացյալ Հայրապետի դավանած խաղաղուրյունը՝ համերաշխուրյան և համագործակցուրյան վրա նիմնված քրիստոնական խաղաղուրյունն է: Նրա սահմանումով՝ ուրշկա սեր և համերաշխուրյուն, եղբայրուրյուն և համագործակցուրյուն, այն սեր շի կարելի

ստեղծել ցանկալի խաղաղուրյունը: Այս գեղեցիկ արդյունքին հասնելու համար էր, որ նրա մտահղացմամբ զումարվեց Մուկվայում (1952 թ.) բոլոր կրոններին պատկանող հավատացյալների համաժողովը, համախմբելու համար Սովետական Միուրյան մեջ գտնվող բոլոր եկեղեցիների և կրոնական միավորումների զործունեուրյունը՝ ի պաշտպանուրյուն ամրող աշխարհի խաղաղուրյան:

Հայ ժողովուրդը և դարավոր Հայ Եկեղեցու բոլոր բարեկամները վշտի ու սուզի, հարգանքի ու մեծարանքի սրարուխ արտահյայտուրյուններ են ունեցել անցյալում, Ամենայն Հայոց Կարողիկոս-Հայրապետի մահվան ու բաղման առիվի, բայց վշտի ու սուզի, հարգանքի ու մեծարանքի անսամբլն, համաժողովրդական և համայնապարփակ արտահյայտուրյունը նորին Ս. Օծուրյուն Տ. Տ. Գևորգ Զ. Հայրապետի մահվան և բաղման առիվի՝ անհայլիքրաց է և հատկանշական:

Եր հովված Եկեղեցուն և ժողովրդին, Եր հարազատ Հայրենիքին ու համայն մարդկուրյան օգտին մատուցած ծառայուրյունները շնորհիլ նրա շահած անպարազիծ ժողովրդականուրյան խոստն փաստերն են այն հարյուրավոր հեռագրերն ու համակեները, որոնք հասել են Ս. էջմիածին՝ վշտակից Գևորգույն Հոգենոր Խորհրդի և միաբանուրյան հասցեով՝ աշխարհի ամեն ծագերից, այն բազմաթիվ պատվիրակուրյունները՝ բաղկացած հոգևորական և աշխարհական պատգամավորներից, որոնք Հայաստան ժա-

մանեցին ո՛չ միայն Սովետական Միուրյան Եկեղեցից, այլ նաև հեռավոր Ամերիկաներից, Լիբանանից, Պաղեստինից և Մումինիայից՝ մասնակցելու համար Երշանկանիշշատակ Վեհի հողարկավորուրյան և քաղման հանդիսուրյուններին և այս բազմահազար հավատացյալների բափորը, որ վերջին հրաժշտը տվեց Մայր Տաճարի պատմական կամարների ներքո հավիտենական բնով նեչած սիրեցյալ Հայրապետի օձյալ անյունին:

Դժվար է հանգուցյալ և հավետ ողբացյալ հայրենասեր Հայրապետի ազգաշեն-Եկեղեցաշեն գործանենուրյունը խոացնել այս մի ժամի սգալիր տոլերի մեջ:

Նա մեծ էր ամեն ինչում. մեծ իր մարդ, իր հոգևորական, իր Եր Հայրենիքի հաղափոքի:

Պատմուրյունը նրա սուրբ և խնկելի անունը կդրի մեր նորազույն ազգային-Եկեղեցական պատմուրյան մեջ, իրեւ մեր օրերի նոր Մովսեսը: Հանգուցյալ Վիհափառ Հայրապետը ունեղեն կամուրջը հանդիսացակ Մայր Հայրենիքի և Սիյուռի միջև: Նրա օրով, ավելի բան երբեք, ամրապնդվեց կապը Մայր Արոնի և արտասահմանյան բեմերի, Մայր Հայրենիքի և տարագիր Սիյուռի միջև:

Աղորենք, որ Տերը շուտով վերացնի Լուսավորչի Գանի վրա իշած սուզի ու բողը՝ պարզելով նրան արծանավոր Գանակալ՝ Երանշնորհ Գևորգ Զ. Կարողիկոսի կերպարվ, ի փառ և ի պայծառուրյուն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու:

Տերը անսասան պահի Հայրապետական Մայր Արոն Ս. էջմիածինը:

